«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Բարոյական արժեքներ»

Առարկան՝ «Հայոց եկեղեցու պատմություն»

Հետազոտող ուսուցիչ՝Լալա Մակարյան

Ուսումնական հաստատություն՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն 3
Բարոյական դաստիարակություն 5
Բարոյական կուլտուրայի հիմնական հասկացությունները 8
Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, միջոցներն ու մեթոդները 10
Բարոյական արժեքները և քրիստոնեությունը 12
Եզրակացություն. 16
Գրականության ցանկ 18

Ներածություն

Յուրաքանչյուր մարդու մեջ կա բարոյականության ծիլը, մնում է այն գտնել և աճեցնել: Բարոյականությունը ներարկվում է մարդու աշխարհայացքի մեջ գիտության, գիտելիքի միջոցով:

Դու ապրում ես մարդկանց շրջապատում: Մի մոռացիր, որ քո յուրաքանչյուր արարք, յուրաքանչյուր ցանկություն անդրադառնում է քո շրջապատի մարդկանց վրա: Իմացիր, որ սահման գոյություն ունի քո ցանկացածի և այն բանի միջև, ինչը կարելի է: Ստուգիր քո արարքները ինքդ քեզ հարց տալով, արդյոք դու անհարմար բաներ չես անում մարդկանց նկատմամբ: Ամեն ինչ արա այնպես, որ շրջապատիդ մարդիկ իրենց լավ զգան:

Դու օգտվում ես մարդկանց ստեղծած բարիքներից: Մարդիկ քեզ տալիս են երջանկություն, նրան հատուցիր քո բարությամբ:

Բարոյականությունը մարդկային վարվելակերպի, վարվեցողության և դրանց առընչվող հակասությունների համակարգ է, որն աշխարհիկ ընկալումով պետք է ընդունելի և գովելի համարվի հասարակության կողմից: Հասարակությունն է սահմանում բարոյական նորմերը, ապա տարբեր հասարակությունների պարագայում բարոյականության հասկացություններն ու վարվելաձևերը կարող են արմատականորեն տարբերվել և նույնիսկ հակասությունն ակընհայտ է արևմտյան և արևելյան հասարակությունների բարոյական ընկալումներում և վարվելակերպի մեջ:

Բարոյական արժեքների ձևավորումը սկսվում է երեխայի ծնվելու հետ միաժամանակ և իրականացվում նրա ողջ կյանքի ընթացքում: Այդ գործընթացին մասնակցում են ընտանիքը, միջավայրը, եկեղեցին, տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաները և, իհարկե, երեխաների դաստիարկության հիմնական օղակը՝ հանրակրթական դպրոցը: Կարևոր պայման է, որ հանրակրթական դպրոցներում պատշաճ կերպով կազմակերպվի բարոյական դաստիարակությունը: Բարոյական արժեքների սերմանումը պետք է իրականացվի դպրոցական բոլոր առարկաների ընթացքում, յուրաքանչյուր ուսուցչի կողմից: Բարոյական արժեքները սերտորեն կապված են կրոնի հետ, ուստի դպրոցում հայոց եկեղեցու պատմություն առարկայի դերը բարձր է բարոյական դաստիարակության և բարոյական արժեքների ուսուցման գործում:

Հետազոտական աշխատանքի արդիականությունը

Սույն հետազոտական աշխատանքի թեման բավականին արդիական է, քանի որ մեր օերում առավել քան երբևէ մեծանում է բարոյական դաստիարակության և բարոյական արժեքների դերը հատկապես երիտասարդության շրջանում: Հետազոտական աշխատանքի նպատակը.

1. Ցույց տալ, թե ինչպես է բարոյական դաստիարակությունը իրականացվում դպրոցում
2. . Վերլուծել բարոյական դաստիարակության խնդիրները, միջոցները և իրագործման ուղիները
3. Ուսումնասիրել բարոյական արժեքների և կրոնի կապը

Բարոյական դաստիարակություն

Բարոյական դաստիարակությունը դաստիարակության համակարգի անբաժանելի մասն է կազմում, հասարակական գիտակցության ձև է։ Կարելի է այսպես ձևակերպել, որ այն հասարակական գիտակցության այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր ոլորտներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում։

Դաստիարակության այս ձևի հիմնական գործառնույթը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է։ Եթե մարդը ունի բարոյական դաստիարակվածություն , ապա դա նշանակում է որ նաև բարոյապես զարգացած է և հակառակը։ Բարոյական դաստիարակությունը կախում ունի բարոյական զարգացումից, իսկ վերջինս էլ՝ բարոյական դաստիարակությունից։

Մարդու (տվյալ դեպքում դպրոցականի) բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումը կախում ունեն տվյալ երկրի սոցիալական պայմաններից այն հանրությունից , որում նա ապրում և գործում է : Եթե դրանք իրենց բարձրության վրա չեն գտնվում եթե չկան համապատասխան նյութական բարոյահոգեբանական նպաստավոր պայմաններ, քաղաքական առողջ մթնոլորտ , քաղաքակրթություն , ապա այնտեղ անձի բարոյականությունն ու բարոյական զարգացումը կայուն լինել չեն կարող ։ Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է։

Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում : Այն չընդհատվող գործընթաց է ։ Բարոյական զարգացմանը նպատում են հասարակության հետ անձի շփումները, հաղորդակցումները , որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների , արարքների վրա, ձևավորում նրա անձը ։Բարոյական դաստիարակության գերագույն նպատակը ոչ միայն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է , այլ նաև նրա կարևորագույն գործառնությունն է հասարակությանը այնպիսի մարդու հավելումը , որը շարունակի յուրացնել հասարակության կողմից ընդունված նորմերը , բարոյական որակները, մշտապես կատարի բարոյական գործողություններ ու արարքներ ՝ հօգուտ

հասարակության և հոգուտ մարդու, անի այն, ինչը համամարդկային է ու արժեքավոր[1]։

Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է , պարկեշտ, առաքինի , բարեկիրթ։ Այդպիսի մարդու նիստն ու կացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները , ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի ։ Ահա թե ինչու Սենեկան ասում էր « Սկզբում սովորիր բարի բարքեր, նոր միայն իմաստություն »։

Բարոյական զարգացումից զուրկ մարդը շրջապատի, հասարակության համար անտանելի «բեռ» է։ Կ. Դ. Ուշինսկին բարոյական զարգացումն ավելի բարձր էր գնահատում, քան մտավոր զարգացումը։ Իր հոդվածներից մեկում գրում է , որ բարոյական աշխարհի մասին իմացությունը չի կարող Գոգոլի չինովնիկներին ուղղել , հասարակության համար նրանց դարձնել պիտանի մարդիկ։

Ընդհանրացնելով վերը շարադրածները, կարելի է ասել՝ բարոյական դաստիարակության վերջնական նպատակը մարդուց իսկական մարդու կատարելատիպի ձևավորրումն է , այնպիսի մարդու, որին Շեքսպիրը կասեր. «Ի՞նչ հրաշալի է մարդը հրաշքների հրաշքը ... ».

Բարոյականությունը շատ բարդ հասկացություն է , դրա էությունը լավ հասկանալու համար պահանջ է զգացվում այն շերտավորել , բաժանել մասերի ու գտնել այն եզակին, որը կարող է արտահայտել ամբողջի (այսինքն բարոյականության) բովանդակությունը։

Պարզվում է , որ այդպիսի եզակին արարքն է ։ Ուրեմն կարելի է ասել մարդու բարոյականության մասին դատում են նրա արարքներով ։ Արարքը գործողություն է։ Սակայն գործողությունը դեռևս արարք չէ , քանի որ գործողության իմաստը, որը նրա ներքին կողմն է մեզ հայտնի չէ ։ Հայտնի է միայն արտաքին կողմը։ Օրինակ՝ մարդը կտրում է ծառը ։ Հեռվից լսում ենք կացնի հարվածները ։ Սա տվյալ գործողության արտաքին կողմն է իսկ թե ինչու է կտրում ծառը մեզ հայտնի չէ ։Այսինքն ՝ հայտնի չէ գործողության ներքին կողմը կամ կտրելու իմաստը։ Եթե մարդը ծառը կտրում է մի

1. [1] Մանկավարժություն , Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան Մանկավարժ 2005, 344 էջ

անօգնական, ծերացած մարդու վառարանի համար, դա արդեն, կլինի այդ գործողության ներքին կողմը կամ իմաստը ։ Ուրեմն գործողությունն արարք է համարվում այն ժամանակ, երբ հայտնի է դառնում տվյալ գործողության ներքին կողմը կամ իմաստը: Առանձնացվում են դրական և բացասական արարքներ:

Այսպիսով, արարքն այն գործողությունն է , որի արտաքին և ներքին իմաստները բացահայտվում են: Արարքի իմաստը բնորոշում է այն կատարող մարդուն , նրա բարոյական զարգացման մակարդակը: Կուբացի գրող Խոսե Մար տինն ասում էր . « Ամենադժվար մասնագիտությունը բարոյական մարդ լինելն է»:

Արարքը կապ ունի նպատակի, դրդապատճառների , պայմանների հետ: Հայտնի վիրաբույժ Մ. Վ. Ամոսովը պատմում է , որ ինքը մանկության տարիներին շատ աղքատ է եղել , որ միշտ իրեն ձգել են գրքերը , ցանկացել է շատ գրքեր ունենալ , սակայն դրանք գնելու համար դրամ չի ունեցել .. «Ես ստիպված,- ասում է Ամոսովը, - այցելում էի գրախանութները , հիացմունքով թերթում դրանք: Մի անգամ աչքիս զարնեց շատ հաստափորմի գիրք, որի շապիկի վրա գրվածէր . « Կենսաբանություն », Ես կամեցա գողանալ այն, բայց ահա նկատեց խանութի տերը և ձեռքը դնելով ուսիս, շատ խստահայացասաց. «Երբեք, ոչ մի պարագայում չի կարելի նման արարք կատարել» : Այդ խոսքերն իմ ամբողջ կյանքում մնացին հիշողությանս մեջ » Ինչպես տեսնում ենք բերված օրինակում առկա են արարքի և՛ նպատակը, և՛ դրդապատճառները , և պայմանները : Արարքի մասին շարադրանքից կարելի է եզրակացնել, որ մարդու արարքների գումարից կամ դրանց ամբողջությունից ձևավորվում է նրա վարքը, որը տվյալ հասարակության մեջ գործող պահանջների ու նոր մերի իմացության աստիճանն է և կիրառումը տվյալ անձնավորության կողմից: Այս դեպքումնմանվարքը կարելի է անվանել վարքիկուլտուրա : Վարքի ու վարքագծի հիմքը արարքն է Հեգելն ասում էր . « Մարդը ոչ այլ ինչ է , քան արարքների ամբողջ շարք»: Հեգելը գրում է . «Երբ մարդը կատարում է այս կամ այն բարոյական արարքը, ապա դրանով նա դեռևս առաքինի չէ . նա առաքինի է միայն այն դեպքում , երբ վարքագծի այդ եղանակը հանդիսանում է նրա բնավորության մշտական գիծը» :

Նմանատիպ օրինակներ կարելի է բերել դասապրոցեսի ընթացքում, և քանի որ հայոց եկեղեցու պատմությունը սերտորեն կապված է բարոյական արժեքների ուսուցման

հետ, կարելի է ասել, պարտադիր պայման է նման օրինակների մեջբերումը, հայտնի մարդկանց դարձնելով բարոյական ու առաքինի կերպարի օրինակ։

Բարոյական կուլտուրայի հիմնական հասկացությունները

Մարդն իր ողջ կյանքում արարքներ է կատարում, որոնք կարող են լինել կամ լավը , կամ վատը։ Եվ նման դեպքերում է, որ մարդը օգտվում է <<մորալ>> հասկացությունից։

« Մորալ» անվան տակ հասկացվում է մարդու բնավորությունը , նկարագիրը , դիմանկարը , սովորույթը , բարոյականությունը և այլն ։ Գրականության մեջ այդ բառի (մորալի) փոխարեն օգտագործվում է «էթիկա» (բարոյագիտություն) հասկացությունը , որը նշանակում է վարվեցողություն , վարվելակերպ և այլն [2]։

Կախված նրանից, թե մարդն ինչպես է ընդունում մորալը , թե ինչպես է այն կիրառում կամ օգտագործում , թե ինչպիսիք են նրա համոզմունքները , սկզբունքները , վարքը և այլն , դրանցով էլ որոշվում է նրա բարոյականության մակարդակը ։ Այլ կերպ ասած, բարոյականությունը , ինչպես այդ ընդունում են մանկավարժ գիտնականները , անձնական բնութագիր է , որն իրար է միացնում այնպիսի որակներ ու հասկացություններ , ինչպիսիք են բարությունը , պարզությունը , անձնական մաքրությունը , արդարամտությու նը , աշխատասիրությունը, կարգավորվածությունը , կարգապահությունը , կոլեկտիվիզմը և այլն ։

Մորալ հասկացությունն ունի համընդհանուր բնույթ ։ Այն ընդգրկում է կյանքի բոլոր ոլորտների կամ մարզերի մարդկային փոխհարաբերությունները, զգուշացնելով մարդուն ամենուրեք ղեկավարվել մորալով ։ Ուրեմն մորալը կատեգորիա է: Կարելի է ասել ՝ հավերժական կատեգորիա, որն իր ներքին բովանդակությանմեջ ներառում է այլ կատեգորիաներ։

Մորալները կյանքի կանոններ են, որոնցով կառավարվելով, մարդը դառնում է համեստ, բարի, կարեկցող և այլն ։ Ելնելով մորալներից հասարակությունը մշակում է բարոյական իդեալ , կամ ինչպես սովորաբար ասում են բարոյական վարքի կերպ,

---

2. [2] Մանկավարժություն , Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան Մանկավարժ 2005, 344 էջ

որին ձգտում են չափահաս երեխաները, այն համարելով օգտակար ։ Բարոյական նորմերը , սկզբունքները , հասկացությունները (կատեգորիաները), իդեալները ընդունվում են սոցիալական որոշակի խմբի մեջ մտնող մարդկանց կողմից (օրինակ ՝ դասարանական կոլեկտիվի կողմից) և հանդես են գալիս որպես հասարակական գիտակցություն ։ Ահա թե ինչու են ասում, որ բարոյականությունը (մորալը) հասարակական գիտակցության ձև է ։

Դրա հետ միասին մորալը նաև անհատական գիտակցության ձև է ։ Ինչո՞ւ ։ Որովհետև յուրաքանչյուր մարդու հատուկ են իր առանձնահատկությունները. զգացմունքները, մտածողությունը , հիշողությունը , երևակայությունը և այլն ՝ Նշանակում է ՝ մարդու կողմից ընդունված անձնական, բարոյական նորմերը , սկզբունքները , իդեալները . միաժամանակ արտահայտում են նրա որոշակի հարաբերությունները ուրիշ մարդկանց նկատմամբ, իր նկատմամբ, իր աշխատանքի նկատմամբ, բնության նկատմամբ և այլն։ Ուրեմն ՝ դաստիարակի գլխավոր նպատակը պետք է լինի սովորողների մեջ ձևավորել բարոյական կուլտուրա ։ Իսկ դա պահանջում է նրանց մեջ ձևավորել հումանիստական զգացմունքներ, օրինակելի վերաբերմունք ուրիշ մարդկանց նկատմամբ, ընկերասիրություն , փոխօգնություն , պահանջկոտություն, կոլեկտիվիզմ, հարգանք մեծահասակների , փոքրերի, գեղեցիկ սեռի ներկայացուցիչների նկատմամբ ու այդ ամենն իրագործել ամենուրեք և մշտապես։

Մորալը ենթադրում է նաև բարեկամություն , բարի ցանկություն , պատասխանատվություն պատրաստակամություն ուշադրություն , կարեկցություն ուրիշ մարդկանց նկատմամբ և այլ որակների գործադրում ։ Վերը շարադրածները հաստատում են, որ ընդհանուր առմամբ, բարոյական դաստիարակությունն ունի հումանիստական ուղղվածություն , որն իրագործվում է գործունեության տարբեր ձևերով . առաջին հերթին միջանձնային փոխհարաբերությունների միջոցով ։ Դաստիարակը պետք է դպրոցականների մեջ նկատի անհոգության , անտարբերության նշանները և պարտադիր կարգով վերացնի դրանք, քանի որ հենց դրանք կարող են արգելակել բարոյական նորմերի մուտքը դեպի ներաշխարհ և խարխլել այն ամենն, ինչը իդեալական է և օգտակար։ Ուսուցչի կենդանի օրինակը կարող է փոխարինել բարոյական թեմայով զրույցներին , պատմություններին ,

դասախոսություններին : Սակայն դրանք բոլորը չեն ժխտում կամ անտեսում բարոյական լուսավորության դերն ու նշանակությունը , որի կարիքը զգում են աշակերտները : Խոշորագույն գիտնականների, արվեստագետների, գրողների ընդհանրապես մեծ մտածողների մեծ հայրենասերների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը , նրանց վարա ծկյանքի սկզբունքները , բարոյական արարքները (օրինակ՝ Հրաչյա Աճառյանի, Հովհ . Թումանյանի) , Աստվածաշնչյան օրինակները աշակերտների մեջ առաջացրել են ճանաչողական հետաքրքրություններ դեպի մարդն ընդհանրապես ու խթանել նրանց հումանիստական գործունեությունն ու վարքը :

Սովորողների հումանիստական լուսավորության համար նշանակալից են մեծ հայրենասերների, ազատամարտիկների, ազգային հերոսների հետ հանդիպումները: Նրանց հուզական զրույցները , պատմությունները , դասախոսությունները կարող են խոր հետք թողնել դպրոցականների մտածողության մեջ : Դասերի ընթացքում ուսումնական թեմաներին առնչվող չարի, բարու վերլուծությունները , սոցիալական արդարությունների ու անարդարությունների բացահայտումները սովորողներին կտանեն դեպի մարդկային փոհարաբերությունների բարդ աշխարհը, կսովորեցնեն նրանց գնահատել հումանիզմի համամարդկային գաղափարները : Դպրոցականների հումանիստական դաստիարակության համար էական դեր կարող են խաղալ նրանց կոլեկտիվ գործունեությունը , կոլեկտիվ ուսուցումը , կոլեկտիվ աշխատանքը և այլ գործոններ . Սակայն այդ ամենով հանդերձ դաստիարակը պետք է ստեղծի այնպիսի իրավիճակ , որպեսզի աշակերտներն անկախ իրենցից , դրսևորեն հումանիստական արարքներ, գործողություններ կատարելու կամք:

Բարոյական դաստիարակության նպատակը, խնդիրները, միջոցներն ու մեթոդները

Բարոյական դաստիարակության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ են դասվում անձի գիտակցության, զգացմունքների ու վարքի ձևավորումը: Երկրորդ խմբի մեջ են մտնում բարոյական բարձր որակները՝ հումանիզմը, կոլեկտիվիզմը, հայրենասիրությունը, գիտակցական կարգապահությունը, քաղաքացիական դաստիարակությունը և այլն:

Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիներ որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ:

Նա իր օրինակով պետք է բարություն ու համեստություն սերմանի:

Շատ կարևոր են բարոյական թեմաներով զրույցները : Նախօրոք լավ մշակված հարցերի միջոցով կարելի է քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, վերլուծել որևէ կինոնկար,, կարդացած վեպի հերոսների հոգեբանական առանձնահատկությունները և այլն:

Բարոյական թեմայով բանավեճի նյութ կարող է լինել շրջապատի կյանքի առօրյան, հասարակության զարգացմանը խոչընդոտող պատճառները , սոցիալական անարդարությունները, մեծ իրադարձությունների պատճառների բացահայտումը և այլն:

Մանկավարժը պետք է իմանա, թե կրտսեր, դեռահասության տարիքներում բարոյական ի՞նչ որակներ սերմանի:

Նա պետք է կարողանա գտնել բարոյական զարգացման առանցքը, հիմքը: Դրանում է երևում ուսուցչի մանկավարժական վարպետությունը:

Դեռահասության տարիքում երեխան ամենուր է՝տանը, դպրոցում, բակում, թաղամասում, հասակակիցների շրջապատում և այլն: Այս վայրերում էլ նա ձեռք է բերում մերձավոր շրջապատի միջավայրը յուրացնելու փորձ:

Դեռահասի համար այս տարիքում մեծ նշանակություն ունի օրինակի ուժը: Նա դառնում է յուրօրինակ հետաքրքրասեր առաջին հերթին իրենց շրջապատող մարդկանց համար: Նրանց մեջ հայտնաբերում է այնպիսի որակներ,որ ինքը չունի, դրա համար կողմնորոշվում է դեպի նրանց օրինակը:

Մանկավարժի խնդիրն է դրական բարոյական օրինակի ձևավորումը և բացասական արարքներից աշակերտներին ետ պահելը, իսկ դրան նա պետք է հասնի իր ճիշտ կողմնորոշման, մանկավարժական տակտի, վարպետության և հեղինակության շնորհիվ:

Դեռահասության տարիքում ուսուցիչը իր սանին կողմնորոշում է բոլոր արարքներում, ապա օգնում նրան յուրացնելու բարոյական զարգացմանն ու

բարոյական հասկացություններին վերաբերող գիտելիքներ, դրանք դարձնում նրա համոզմունքները, նրա համար մշակում ինքնադաստիարակության ծրագիր:
Նա խորհուրդներ ու ցուցումներ է տալիս դեռահասին , թե ինչպես կիրառել և իրականացնել այդ ծրագիրը:

Հմուտ մանկավարժը, օգտագործելով ուսումնական առարկաների բոլոր հնարավորությունները, պատանուն կարող է զինել բարոյականությանը վերաբերող տեսական գիտելիքներով : Նա կարող է կազմակերպել բարոյական թեմաներով զրույցներ, դասախոսություններ և բանավեճեր:

Բարոյական արժեքները և քրիստոնեությունը



Բարոյական արժեքները սերտորեն կապված են մեր հավատքի՝ քրիստոնեության հետ: Կարելի է ասել, որ դպրոցում հենց առաջինը բարոյական արժեքների ուսուցման գործը պետք է իրականացնեն հայոց եկեղեցու պատմության ուսուցիչները: Կարելի է տարբեր օրինակներ բերել Աստվածաշնչից, կամ ինչու չէ հատվածներ կարդալ և քննարկել, վեր հանել տվյալ հատվածի բարոյական արժեքները և այլն: Եթե բարոյական արժեքը դիտարկենք եկեղեցու տեսանկյունից, ապա կարելի և այ սահմանել հետևյալ կերպ.

Բարոյական արժեքները այն վեհ գաղափարներն , պատվիրանները, ուսուցումներն են , որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այդպիսի բարձրագույն արժեքներ են հոգևոր-բարոյական արժեքները՝ տրված Աստծո կողմից, հաստատված Քրիստոսի պատվիրաններով, ուսուցումներով:

Այլ կրոններ կամ պետական համակարգեր ևս ունեն բարոյական արժեքների մղող օրենքներ ու պատվերներ, սակայն քրիստոնեության բարոյական արժեքներն անհամեմատ վեր են մնացյալ բոլորից: Բացի այդ, բարոյականության, առաքինության օրենքներ կարելի է շատ հաստատել, սակայն դրանց ամբողջական կատարման, ոչ միայն գործողության օրինակելիության, այլև մտքի ու սրտի մաքրությամբ իրագործելու համար մարդկային ներուժը բավարար չէ: Քրիստոնեությունը խոսում է աստվածային շնորհի մասին, որով մարդն իր կամքով, գործակից լինելով աստվածային նախախնամությանն ու զորակցությանը, կարողանում է ապրել բարոյական ու առաքինի կերպով, իսկ սայթաքելու դեպքում էլ մաքրվել ու սրբվել կատարված մեղանչումներից: Մինչդեռ միայն օրենքի հաստատումը այս շնորհն ու զորությունը չի տալիս մարդուն:

Սովորական օրենքների հետ համեմատությամբ՝ տասնաբանյա պատվիրանների առավելությունը երևում է հատկապես վերջին պատվիրանով, որը հրահանգում է չցանկանալ ուրիշի ունեցվածքը, կնոջը, ծառայողներին (Ելք 20.17): Պողոս առաքյալը, խոսելով այս պատվիրանի մասին, նշում է, որ ցանկության մեղավոր բնույթը ճանաչելի չէր լինի, եթե օրենքն ասած չլիներ՝ մի՛ ցանկացիր (Հռ. 7.7):

Քրիստոնեությունը բարոյականության համար անհրաժեշտ արտաքին դրսևորումները փոխադրեց ներքին արտահայտման մեջ՝ մեղքը դիտարկելով մարդու հոգևոր ներաշխարհում: Դրա համար է, որ Քրիստոս բարկությունը կարծես համարժեք համարեց մարդասպանությանը, իսկ կնոջը ցանկությամբ նայելը՝ շնությանը (Մատթ. 5.21-22, 27-28): Սուրբ Ներսես Շնորհալին «Հավատով խոստովանիմ» խորագրով իր քսանչորս աղոթքներից մեկում խնդրում է, որ Աստված իրեն զորություն տա, որպեսզի աչքերը չնայեն արատավոր բաների, և ականջները չլսեն մեղսալի, անպարկեշտ, չար խոսքեր: Քրիստոնեությունն անգամ լսելու և տեսնելու մեջ է դնում բարոյական սկզբունքներ՝ ի տարբերություն այլ օրենքների, որոնք ուշադրություն են դարձնում միայն արտաքին արարքներին, արտաքին գործողություններին: Այսօր ոչ միայն մարդկանց հետ հաղորդակցության մեջ, այլև հաճախ համացանցից օգտվելիս, հեռուստացույց դիտելիս կանգնում ենք այն անցանկալի իրողության առջև, որը շեշտել էր Ներսես Շնորհալին՝ անպարկեշտ, մեղսալի բաներ տեսնելու կամ լսելու վտանգը: Պետք է զգոն լինել. առօրյայի, ներկա

տեղեկատվության ու զվարճանքների հորձանուտում գայթակղություններ, մեղսալի տեսարաններ են աչքի զարնվում, բայց այլ է դրանց հանկարծակի աչքի ընկնելը, և այլ է, երբ մարդը հավանություն է տալիս այդ պատկերներին ու տեսարաններին՝ դրանք մեղավոր հաճույքով դիտելով, ընդունելով և դրանով իսկ ընկնելով մեղքի մեջ:

Բացի ուսուցիչը, ծնողների դերը նույնպես մեծ է բարոյական դաստիարակության հարցում:Հոգին է, որ մարմնին կենդանություն է տալիս: Եվ ինչպես, Եղիշե պատմիչի խոսքերով, հոգին առավել է, քան մարմինը, այդպես էլ պետք է առավել ջանադրություն ցուցաբերել հոգևորի համար: Այդ պատճառով Հայ Առաքելական Եկեղեցին ճիշտ է համարում մանկամկրտությունը, երեխաների հոգևորի համար ծնողների հոգալը դեռևս վաղ հասակից: Կրոնական տեսակետից մեղքի հակառակը բարոյականությունը չէ, այլ հավատը, և ծնողներն առաջին հերթին չպետք է փորձեն բարոյական բարձր ուսուցումներ տալ երեխաներին, որոնք մանուկներին անհասկանալի կարող են թվալ, այլ զորացնել նրանց հավատքը: Սրա ակնարկը տեսնում ենք Պողոս առաքյալի խոսքի մեջ. «Իբրև մանուկներ ի Քրիստոս կաթ տվեցի ձեզ և ոչ՝ կերակուր, քանի որ դեռ կարող էլ չէիք» (Ա Կորնթ. 3.2):
Եթե կրոնը լիներ միայն բարոյական պահանջներ ներկայացնող, ապա այդ դեպքում քրիստոնեությունը կվերածվեր սովորական բարոյագիտության կամ բարոյական, էթիկական ուսուցումների համակարգի: Մինչդեռ հավատքի զորացումը բերում է Աստծո վեհ, առաքինի, բարոյական պատվիրանների համաձայն ապրելու վճռականությունը, ինչպես նաև շնորհը և ուժը՝ այդ պատվիրաններով ապրելու համար[3]:

Բարոյական արժեքները այն համամարդկային արժեքներն են, որ գոյություն ունեն տեսականորեն և որոնց բովանդակությունը կապ չունի հասարակության զարգացման որևէ կոնկրետ պատմանկան շրջափուլի հետ և այդ արժեքները համընդհանուր են բոլորի համար:

3. [3] Մանկավարժական պատմության քրիստոմատիա, Ա.Ս. Կամենևի խմբ.,1 հտ, Ջ. Լոկ, Լ. Տոլստոյ, Եր., 1936թ., 700 էջ

Քրիստոս իր համբարձումից առաջ առաքյալներին ասաց. «Գնացե՛ք ուրեմն աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանեցե՛ք նրանց պահել այն բոլորը, ինչ որ ձեզ պատվիրեցի» (Մատթ. 28.19-20): Հետևաբար, Քրիստոս Իր պատվիրաններն ու ուսուցումներն ընդհանուր է համարում աշխարհի բոլոր ժողովուրդների համար: Քրիստոսի պատվիրաններն ընդհանուր են, որովհետև դրանք վերաբերում են Աստծո կողմից ստեղծված մարդու հոգուն, զգացումներին, առ Աստված ձգտումին և այլ հատկանիշներին, որոնք համընդհանուր են բոլոր մարդկանց համար: Պողոս առաքյալը նույնպես ասում է, որ Քրիստոսով այլևս խտրություն չկա հրեայի և հեթանոսի միջև (Գաղ. 3.28): Հրեաները խտրություն էին դնում իրենց և այլ ժողովուրդների միջև՝ շեշտելով Աստծո կողմից ընտրյալ ժողովուրդ լինելու հանգամանքը: Բայց Քրիստոսի պատվիրանով, նաև առաքյալի ուսուցումով վերացվում էր ժողովուրդների միջև խտրականությունը, որով և բոլորի համար ընդհանուր էին դառնում քրիստոնեական արժեքները:

Կրոնական-բարոյական արժեքները վեր են նաև ժամանակի իշխանությունից, քանզի Քրիստոս ասում է. «Երկինք ու երկիր կանցնեն, բայց Իմ խոսքերը չեն անցնի» (Մարկ. 13.31): Սա նշանակում է, որ Քրիստոսի պատվիրանները տրված են բոլոր ժողովուրդների համար բոլոր ժամանակներում:

Եզրակացություն.

Մեր հազարամյա մշակույթը ազգային արժեքների, հոգևոր և բարոյական ուղենիշների հիմքում է: Դա մեր նախնիների քրիստոնեական իդեալների մարմնացումն է, որոնք վեհաշուք տաճարներ են, սրբապատկերներ, հին գրականություն: Ներկայումս հատկապես կարևոր է մատաղ սերնդին գրավել հայկական հոգևոր ավանդույթներով ու պատմությունով, հուշարձաններով:

Դրանում պատասխանատու դեր է հատկացվում հայոց եկեղեցու պատմության դասերին, որտեղ լուծվում է «հոգևոր և բարոյական դաստիարակության» խնդիրը, որը հասկացվում է որպես անձի հոգևոր և բարոյական կազմավորման խթանման գործընթաց, բարոյական զգացմունքների ձևավորում, բարոյական կերպարը , բարոյական դիրքը, բարոյական վարքը նրա մեջ:

Հոգևոր և բարոյական դաստիարակությունը ուղղվածություն է դեպի բարձր բարոյական արժեքներ, երեխաների բարոյական իդեալի վեր բարձրանալը դյուրացնելու գործընթաց, նրանց բարոյական արժեքներին ծանոթացնելու միջոցով. բարոյական զգացմունքների արթնացում և զարգացում, բարոյական կամքի ձևավորում:

Այսպիսով, հոգևոր և բարոյական դաստիարակության հիմնական բովանդակությունը պետք է լինի ազգային հիմնական արժեքները, որոնցից յուրաքանչյուրը բացահայտվում է բարոյական արժեքների (գաղափարների) համակարգում՝ հայրենասիրություն, սոցիալական համերաշխություն, քաղաքացիություն, ընտանիք, աշխատանք և ստեղծագործականություն, գիտություն, Աստվածաշունչ, կրոնի ընդունման պատմություն և այլն:

Բարոյականության դաստիարակության գործընթացը բավականին բարդ երևույթ է, քանի որ հենց դա է կազմում մարդու հիմնական որակները, նրանց ծանոթացնում հավերժական, խորը մարդկային արժեքների հետ:

Այսպիսով, ներդաշնակության մեջ հոգևոր արժեքները կարևոր դեր են խաղում անհատականության զարգացման գործում և անհրաժեշտ նախադրյալներ են յուրաքանչյուր մարդու մասնակցության համար սոցիալական կյանքի բոլոր ասպեկտների բարելավմանը: Բարոյական վարքի հիմքը գործողությունն է, և

կյանքում մարդը պետք է հատուկ օրինակ վերցնի `բարոյական իդեալները կրող անհատականություններից։

Եվ քանի որ, բարոյական արժեքների սերմանման գործում անփոխարինելի է հայոց եկեղեցու պատմության դասընթացը, կարելի է առանձին ժամեր հատկացնել և հնարավորություն ընձեռնել երեխաներին զրույց ունենալու տեղի քահանայի հետ։ Հարց ու պատասխանի միջոցով նոր գիտելիքներ ստանալ հայ ժողովրդի պատմության , քրիստոնեության դարավոր պատմության և կրոնի ու բարոյական արժեքների կապի վերաբերյալ։

Գրականության ցանկ

1. Գուրեվիչ Պ.Ս. Մշակույթի փիլիսոփայություն [Տեքստ] / P.S. Գուրեվիչը: - Մ., 1995 թ.
2. Ֆրենկ Ս.Լ. Հասարակության հոգևոր հիմքերը: [Տեքստ] / S.L. Ֆրանկ - Մ., 1992:
3. Աստվածաշունչ, (եբր և հուն թարգմ)., ՀԱԸ 1998թ., 1424 էջ
4. Դյուի Ջ., Մարդկային բնությունը և վարքը, 1922թ.
5. Մանկավարժական պատմության քրիստոմատիա, Ա.Ս. Կամենևի խմբ.,1 հտ, Ջ. Լոկ, Լ. Տոլստոյ, Եր., 1936թ., 700 էջ
6. Պետրովսկի Ա. Վ., Ընդհանուր հոգեբանություն, Եր., Լույս, 1974թ., 540 էջ
7. Ռուսսո Ժ. Ժ., Էմիլ կամ դաստիարակության մասին, Եր.,Հայ. պետ. ուս մանկ. հրատ., 1962թ., 293 էջ
8. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Ա. Վ. Պետրովսկու խմբ., Եր., 1977, 397 էջ
9. Մանկավարժություն , Յու. Ա. Ամիրջանյան, Ա. Ս. Սահակյան Մանկավարժ 2005, 344 էջ